ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<07>> 07 2011թ. N: 63 ք.Գյումրի

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 119 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N 19 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագրի>> 22-րդ կետի դրույթները

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել գենդերային հարցերով զբաղվող Շիրակի մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի << ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի <<Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը և դրա միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 645-Ն որոշման կատարման նպատակով մշտապես գործող աշխատանքային խումբ ստեղծելու մասին>> N 119 կարգադրությունը:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի 2011թ
08 08 ի N 63
կարգադրության

ԿԱԶՄ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հարություն Արշակյան	ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ.
Լուսինե Գինոսյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ.
Ռուբիկ Հարությունյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ, անդամ.
Սամվել Գրիգորյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, անդամ.
Ամալյա Ադամյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայություն գործակալության Գյումրու զբաղվածության մարզային կենտրոնի տնօրեն, անդամ.
Գառնիկ Սիմոնյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ.
Գոռ Մարգարյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ, անդամ.
Հայկուշ Ավետիսյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ.
Գայանե Կարապետյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի

առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ.

Արթուր Գրիգորյան — ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրիի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազոր, անդամ.

Թերեզա Գրիգորյան — Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական պաշտպանվածության հարցերով գլխավոր մասնագետ, անդամ /համաձայնությամբ/.

Ելենա Վարդանյան — <<Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա>> հասարակական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի նախագահ, անդամ /համաձայնությամբ/.

Սուսաննա Մկրտչյան — <<Գյումրիի կանայք>> հասարակական կազմակերպության նախագահ, անդամ /համաձայնությամբ/.

Կարինե Գրիգորյան — <<Ագաթ հատուկ կարիքներով կանանց կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ,անդամ /համաձայնությամբ/:

Լիլիթ Գորգինյան — ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ — Խ. ՊՈՂՈՍՅԱՆ